

Բանալի բառեր՝ սեփականության իրավունք, սեփականության իրավունքի պաշտպանություն, ֆիզիկական սեփականության իրավունք, մտավոր սեփականության իրավունք:

ՀՏԴ 347.7:330.34

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ ՀՀ-ՈՒՄ

Սուբիաս ԱՎԵՏԻՍՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու,
ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի ախտեսն

Սեփականությունը հարաբերություն է, մի կողմից, մարդու, մարդկանց խմբի կամ համագործակցողների և, մյուս կողմից, կյուրական աշխարհի ցանկացած արժեքի միջև, որը կայանում է սուբյեկտի կողմից օբյեկտի յուրացման մշտապես կամ ժամանակավոր, մասնակի կամ լրիվ օտարման պայմաններում: Այսինքն, սեփականությունը բնութագրում է օբյեկտի պատկանելիությունը որոշակի սուբյեկտի: Պատմականորեն ռեսուրսների սահմանափակությունը ստիպել է մարդկանց դրանք օգտագործել խնայողաբար և արդյունավետ և վերջինիս արդյունքում է հենց ձևավորվել սեփականությունը: Ռեսուրսի արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունը պահանջում է դրա նկատմամբ հսկողության և տիրապետման հաստատում, այլապես՝ տնտեսավարող սուբյեկտը չի ունենա անհրաժեշտ շահագրգռվածություն ոչ միայն ամկա ռեսուրսները արդյունավետ օգտագործելու, այլև այս կամ այն արդյունքը ստեղծելու առումով: Ելնելով դրանից՝ ձևավորվել և տնտեսագիտական գրականության մեջ տեղ է գտել այն տեսակետը, համաձայն որի՝ սեփականությունը նախնառաջ արտահայտում է մարդկանց հարաբերությունները՝ կապված ռեսուրսի տիրապետման հետ:

Աղյուսակ 1.

Սեփականության իրավունքի գրանցման ցուցանիշի և դրա առանձին բաղադրիչների մեծությունները աշխարհի մեզատարածաշրջաններում, 2017թ.¹

Սեգ-տարածաշրջաններ	Սեփականության իրավունքի գրանցում ցուցանիշով երկրի		Սեփականության իրավունքի գրանցման հետ կապված ընթացակարգերի բանակը	Սեփականության իրավունքի գրանցման համար պահանջվող ժամանակի ծախսը (արտահայտված օրերով)	Սեփականության իրավունքի գրանցման հետ կապված ծախսերը (արտահայտված սոկոսներով)
	վարկանիշային միավորը	գբաղեցրած տեղը			
Արևելյան Ասիա և Խաղաղօվկիանոսյան	57,21	97	5,5	74,5	4,3
Եվրոպա և Կենտրոնական Ասիա	76,02	47	5,3	20,4	2,5
Լատինական Ամերիկա և Կարիբներ	55,36	118	7,2	63,3	5,8
Միջին Արևելք և Հյուսիսային Աֆրիկա	60,91	93	5,7	30,3	6,0
ՏՀԶԿ բարձր եկամուտով երկրներ	76,81	44	4,6	22,3	4,2
Հարավային Ասիա	45,97	146	6,8	111,6	6,9
Մերձ-Սահարայան Աֆրիկա	51,71	131	6,2	59,3	7,8
Միջինը	60,57	96,57	5,9	54,52	5,35

Այսպիսով, սեփականությունը ռեսուրսի կամ բարիքի տիրապետման, օգտագործման և տնօրինման հնարավորությունն է: Սա համարվում է սեփականության տնտեսական բովանդակությունը: Սեփականությունն ունի նաև իրավական բովանդակություն: Հասարակական հարաբերությունները կարգավորվում են համապատասխան իրավական նորմերով: Ռեսուրսի տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավասությունները, որոնք արտահայտում են սեփականության

¹ <http://www.doingbusiness.org/data/exploretopics/registering-property>

իրավունքի բուն բովանդակությունը, ամրագրվելով հատուկ իրավանորմերով, հաստատում են գույքային միջոցների պատկանելիությունը սեփականատիրոջը: Սեփականատիրոջ իրավունքը պաշտպանվում է մի շարք օրենքներով: «Եթե սեփականության իրավունքը դիտարկենք որպես օրենք, սահմանված կանոնների ամբողջություն, որոնք որոշում են թե այս կամ այն անձը ինչպիսի իրեր կարող է օգտագործել կամ տնօրինել, ինչպես նաև պայմանները, որոնցում այդպիսի օգտագործումը և տնօրինումը կարող են իրագործվել, այդ դեպքում սեփականության իրավունքը իրավական կատեգորիա է»²: Այսպիսով՝ սեփականությունն ունի և՛ տնտեսական, և՛ իրավական բովանդակություն: Ընդ որում՝ այս կողմերը չի կարելի իրարից տարանջատել: Դրանք գտնվում են օրգանական միասնության մեջ:

Աղյուսակ 2.

Սեփականության իրավունքի գրանցման ցուցանիշի և

դրա առանձին բաղադրիչների մեծությունները Նախկին Խորհրդային Միության հանրապետություններում, 2017թ.³

Երկրները	Սեփականության իրավունքի գրանցում ցուցանիշով երկրի		Սեփականության իրավունքի գրանցման հետ կապված ընթացակարգերի բանակը	Սեփականության իրավունքի գրանցման համար պահանջվող ժամանակի ծախսը (արտահայտված օրերով)	Սեփականության իրավունքի գրանցման հետ կապված ծախսերը (արտահայտված սեփականության արժեքի նկատմամբ տոկոսներով)
	վարկանիշային միավորը	զբաղեցրած տեղը			
ՀՀ	87,78	13	3	7	0,2
ՌԴ	88,72	12	4	13	0,2
Ադրբեջան	82,07	21	3	5,5	0,2
Բելառուս	92,19	5	2	3	0,0
Վրաստան	92,85	4	1	1	0,0
Ղազախստան	84,61	17	3	3,5	0,1
Լիտվա	92,94	3	3	3,5	0,8
Լատվիա	81,87	22	4	16,5	2,0
Մոլդովա	82,60	20	5	5,5	1,1
Տաջիկստան	63,50	90	5	36	3,1
Ուկրաինա	69,61	64	7	17	1,8
Ուզբեկստան	66,34	73	9	46	1,2
Ղրղզստան	90,21	8	3	3,5	0,2
Էստոնիա	91,02	6	3	17,5	0,5
Միջինը	87,78	25,57	3,92	12,75	1,48

Ինչպես հայտնի է շուկայական հարաբերությունների շարունակական զարգացումը պահանջում է ֆինանսական խիստ կարգապահության սահմանում, նոր ընկերությունների ստեղծում և մրցակցության զարգացում: Բոլոր այդ միջոցառումները տանում են կառուցվածքային փոփոխությունների: Այս համատեքստում կարևորվում են հատկապես ինստիտուցիոնալ բարեփոխումները, սեփականության հստակ իրավունքների սահմանումը, լավագույն իրավական և ֆինանսական ենթակառուցվածքների ստեղծումը և պետական ապարատի վերակազմավորումը:

Այսպիսով, շուկայական միջավայրի ստեղծման առաջին քայլը ֆինանսական կարգապահության սահմանումն ու մրցակցության զարգացումն է, ինչը նպաստում է ձեռնարկությունների վերակազմավորմանը՝ անկախ սեփականության ձևից: Երկրորդ քայլը սեփականության իրավունքի ձևավորումն է ու դրա բաշխումը: Բանն այն է, որ սեփականության իրավունքը ընկած է շուկայական տնտեսությունը շարժող խթանների հիմքում: Որոշելով, թե ով է կրում ռիսկը, ով է շահելու կամ կորցնելու գործարքի կնքման արդյունքում՝ սեփականության իրավունքը խրախուսում է տնտեսապես հիմնավորված ներդրումները, բարձրացնում է շահագրգռվածությունը աշխատանքի արդյունքների նկատմամբ և ստեղծում է պահանջ պայմանագրային հարաբերությունների օրենսդրական ապահովման գործում: Այլ խոսքերով ասած՝ գնահատելով աշխատանքը և առողջ միտքը՝ հստակ որոշված սեփականության իրավունքը նպաստում է երկրի տնտեսական աճին, արժեքների ստեղծմանը: Բացի այդ սեփականության իրավունքի փոխանցումը բազմաթիվ սուբյեկտների խանգարում է իշխանության կենտրոնացմանը քաղաքական մակարդակում և նպաստում է հասարակության սոցիալական և քաղաքական կայունացմանը:

Եթե զարգացած շուկայական տնտեսությունն ունեցող երկրներում սեփականության իրավունքի բաշխումը և դրա իրավաբանական ձևավորումը կատարվել է դարերի ընթացքում և մյուս երկրների համեմատությամբ այն տարբերվում է հարաբերական կայունությամբ, ապա անցումային տնտեսությունն ունեցող երկրների մեծ մասում սեփականության իրավունքի Նախասկզբնական վերակազմավորումը կատարվեց շատ արագ, սակայն դրանց ոչ լրիվ փոխանցումը նոր սեփականատերերին զգալիորեն թուլացնում է այդ գործընթացների արդյունավետությունը:

Պետք է նշել, որ ինչպես միջազգային, այնպես էլ ոչ կառավարական տարբեր կազմակերպությունների կողմից մշակված առանձին համաթվերում ներկայացվում են տարբեր երկրներում սեփականության իրավունքի գրանցման և պաշտպանության ուղղությամբ իրականացված վերափոխումների գնահատականները: Սասնավորապես Գործարար ակտիվության համաթվի 11 հենայուններից մեկը բնութագրում է աշխարհի ավելի քան 189 երկրներում սեփականության իրավունքի գրանցման և փոխանցման հետ կապված բոլոր ընթացակարգերը, ժամանակը և ծախսերը և այդ ուղղությամբ տարբեր երկրներում իրականացված վերափոխումների արդյունքները: Աղյուսակ 1-ում ներկայացված է աշխարհի մեզատարածաշրջաններում սեփականության իրավունքի գրանցման ներկա վիճակը:

² Դավոյան Ս. և ուրիշներ, Վերափոխումները անցումային երկրների տնտեսություններում /Ս. Դավոյան, Ա. Մարկոսյան, Զ. Սարգսյան, Եր., Տիգրան Մեծ, 2003, էջ 242

³ <http://www.doingbusiness.org/data/exploretopics/registering-property>

Աղյուսակ 1-ի տվյալներից հետևում է, որ սեփականության իրավունքի գրանցման ցուցանիշով աշխարհում առաջատար են համարվում ՏՀԶ բարձր եկամուտով երկրները և Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հանրապետությունները, իսկ Հարավային Ասիայի և Մերձ-Սահարայան Աֆրիկայի երկրները բնականաբար գտնվում են վարկանիշային աղյուսակի վերջին հորիզոնականներում:

Աղյուսակ 3.
Սեփականության իրավունքի գրանցման ցուցանիշի և դրա առանձին բաղադրիչների մեծությունները ԵԱՏՄ երկրներում, 2017թ.⁴

Երկրները	Սեփականության իրավունքի գրանցում ցուցանիշով երկրի		Սեփականության իրավունքի գրանցման հետ կապված ընթացակարգերի բանակը	Սեփականության իրավունքի գրանցման համար պահանջվող ժամանակի ծախսը (արտահայտված օրերով)	Սեփականության իրավունքի գրանցման հետ կապված ծախսերը (արտահայտված սեփականության արժեքի նկատմամբ տոկոսներով)
	վարկանիշային միավորը	գբաղեցրած տեղը			
ՀՀ	87,78	13	3	7	0,2
ՌԴ	88.72	12	4	13	0.2
Տաջիկստան	63.50	90	5	36	3.1
Բելառուս	92.19	5	2	3	0.0
Ղազախստան	84.61	17	3	3.5	0.1
Ղրղզստան	90.21	8	3	3.5	0.2
Միջինը	87,78	24, 16	3,33	11	1, 1

Աղյուսակ 3.
Սեփականության իրավունքի գրանցման ցուցանիշի և դրա առանձին բաղադրիչների մեծությունները ՀՀ-ում և հարևան երկրներում, 2017թ.⁵

Երկրները	Սեփականության իրավունքի գրանցում ցուցանիշով երկրի		Սեփականության իրավունքի գրանցման հետ կապված ընթացակարգերի բանակը	Սեփականության իրավունքի գրանցման համար պահանջվող ժամանակի ծախսը (արտահայտված օրերով)	Սեփականության իրավունքի գրանցման հետ կապված ծախսերը (արտահայտված սեփականության արժեքի նկատմամբ տոկոսներով)
	վարկանիշային միավորը	գբաղեցրած տեղը			
ՀՀ	87,78	13	3	7	0,2
Ադրբեջան	82.07	21	3	5.5	0.2
Վրաստան	92.85	4	1	1	0.0
Իրան	82.07	21	3	5.5	0.2
Թուրքիա	74.67	46	7	7	3.0
Միջինը	87,78	21	3,4	5,2	0,2

Ինչ վերաբերում է նախկին Խորհրդային Միության հանրապետություններին, ապա պետք է նշել, որ վարկանիշային աղյուսակի լավագույն տասնյակում ընդգրկված են նախկին ԽՍՀՄ հինգ հանրապետություններ (տես աղյուսակ 2), ինչը փաստում է, որ այդ երկրներում այս ուղղությամբ իրականացված վերափոխումները եղել են բավականաչափ արդյունավետ: Նույնը չի կարելի ասել նույն կազմի մեջ մտնող Տաջիկստանի և Ուզբեկստանի մասին, որոնք հայտնվել են վարկանիշային աղյուսակի վերջին հորիզոնականներում:

Սեփականության իրավունքի գրանցման ցուցանիշի և դրա առանձին բաղադրիչների մեծությունների վերլուծությունը մեկ այլ տարածաշրջանային միավորման համատեքստում՝ ԵԱՏՄ երկրներում իրականացնելիս կարելի է արձանագրել, որ ԵԱՏՄ երկրների միջին ցուցանիշը գրեթե չի տարբերվում նախկին ԽՍՀՄ հանրապետությունների միջին ցուցանիշից: Այս տնտեսական միության կազմի մեջ մտնող երկրների շարքում առաջատար է Բելառուսը, ապա Ղրղզստանը, ՌԴ-ն, ՀՀ-ը, Ղազախստանը և Տաջիկստանը: Նշենք, որ ՀՀ-ը գրեթե բոլոր բաղադրիչներով գտնվում է միջին դիրքում տնտեսական միության երկրների շարքում:

Բավական հետաքրքրական է նշված ցուցանիշի և նրա առանձին բաղադրիչների վերլուծությունը ՀՀ և հարևան երկրների շարքում: Ինչպես փաստում են աղյուսակ 3-ի տվյալները, սեփականության իրավունքի գրանցման հետ կապված ընթացակարգերի բանակ ցուցանիշով ՀՀ-ն հարևան երկրներից զիջում է միայն Վրաստանին և ավելի լավ դիրքերում է, քան Թուրքիան: Սեփականության իրավունքի գրանցման համար պահանջվող ժամանակի ծախսը (արտահայտված օրերով) ցուցանիշով զիջում է հարևան բոլոր երկրներին, իսկ սեփականության իրավունքի գրանցման հետ կապված ծախսերը (արտահայտված սեփականության արժեքի նկատմամբ տոկոսներով) ցուցանիշով վատագույն դիրքում Թուրքիան է, իսկ լավագույն դիրքում՝ Վրաստանը: Չնայած այս ամենին՝ ՀՀ-ն հարևան երկրների շարքում սեփականության իրավունքի

⁴ <http://www.doingbusiness.org/data/exploretopics/registering-property>
⁵ <http://www.doingbusiness.org/data/exploretopics/registering-property>

գրանցման ցուցանիշով զբաղեցնում է շուրջ 190 երկրների շարքում 13-րդ տեղը՝ առաջ անցնելով Ադրբեջանից, Իրանից, Թուրքիայից և զիջելով միայն Վրաստանին:

Եւրոնախորհրդի, որ սեփականության իրավունքի գրանցման հեշտությունից գատ շատ կարևոր նշանակություն ունի նաև սեփականության իրավունքի պաշտպանության մակարդակը: Այս առումով վերջին երկու տասնամյակների ընթացքում սոցիալ-տնտեսական և բաղաբաղական երևույթների չափման և գնահատման նպատակով լայն տարածում և կիրառում են ստացել սեփականության իրավունքի և դրա պաշտպանվածության աստիճանի միջերկրային համեմատությունների համար օգտագործվող «Սեփականության իրավունքի միջազգային համաթիվը», որի միջոցով համեմատվում են սեփականության իրավունքը և դրա պաշտպանվածությունը աշխարհի ավելի քան 130 երկրներում: Այդ նպատակով երևույթի գնահատման լայն շրջանակի օգնությամբ վերլուծվում են երեք չափանիշներ, որոնք միավորվում են մեկ միասնական համաթիվում:

Սեփականության իրավունքի միջազգային համաթիվն ունի հետևյալ բաղադրիչները:

Իրավական և բաղաբաղական միջավայր /ԻԶՄ/

- Դատական համակարգի անկախությունը,
- Օրենքի գերակայությունը,
- Քաղաքական կայունությունը,
- Կոռուպցիայի հսկողությունը:

Ֆիզիկական սեփականության իրավունքները /ՖՍԻ/

- Ֆիզիկական սեփականության իրավունքների պաշտպանությունը,
- Սեփականության գրանցումը,
- Վարկերի մատչելիությունը:

Մտավոր սեփականության իրավունքները /ՄՍԻ/

- Մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությունը,
- Արտոնագրային իրավունքների պաշտպանությունը,
- Դեղինակային իրավունքների խախտումները:

Սեփականության իրավունքի միջազգային համաթիվի ցուցանիշների մեծությունները գտնվում են 0-ից 10 միավորների միջակայքում, որտեղ 10-ը ներկայացնում է սեփականության իրավունքների ամենաբարձր արժեքը, իսկ 0-ն վկայում է տվյալ երկրում ապահով սեփականության իրավունքների բացակայության մասին: Նույն ձևով, համաթիվի յուրաքանչյուր բաղկացուցիչ և փոփոխական գնահատվում է այդ միջակայքում:

Ըստ սեփականության իրավունքի միջազգային համաթիվի ցուցանիշի մեծության՝ աշխարհի 125 երկրների դասավորվածության՝ Դայաստանը 2010թ-ին զբաղեցրել է 109-րդ, իսկ 2012թ-ին՝ 102-րդ տեղերը, համապատասխանաբար՝ 3.8 և 4.4 միավորով, Վրաստանը, համապատասխանաբար, զբաղեցրել է 113 և 107 տեղերը՝ 3.7 և 4.3 միավորով, Ադրբեջանը համապատասխանաբար՝ 101 և 102-րդ տեղերը՝ 4.0 և 4.4 միավորով:

Այսպիսով, սեփականության իրավունքի պաշտպանությունը իրավական նորմերի համախմբի օգնությամբ լուրջ ավանդ է դնում բաղաբաղիչների անհատական ազատությունների ապահովման գործի հիմքում, քանի որ սեփականության իրավունքի լայն տարածումը ստեղծում է անկախություն պետական ազդեցությունից և հանգեցնում գույքի իրավունքների ապակենտրոնացման:

Այն հասարակությունում, որտեղ շատ են ինչպես մասնավոր, այնպես էլ պետական սեփականատերերը, ավելի ուժեղ են արտահայտվում «բաղաբաղիչ-պետություն» երկարաժամկետ շահերը, իսկ իրական անվտանգությունը դառնում է ավելի կարևոր, քան ռեսուրսների և իրավունքների կարճաժամկետ բաշխումները և վերաբաշխումները⁶:

Օգտագործված գրականություն

1. Դավոյան Ս. և ուրիշներ, Վերափոխումները անցումային երկրների տնտեսություններում /Ս. Դավոյան, Ա. Մարկոսյան, Դ. Սարգսյան, Եր., Տիգրան Մեծ, 2003, 656 էջ
2. Մարկոսյան Ա.Խ., Սահակյան Ա.Գ., Պետական գույքի կառավարում, ուսումնական ձեռնարկ/ «Տիգրան Մեծ» հրատ., 2015, Մաս 1, 492 էջ
3. International Property Right Index, 2010 Report, p.25
4. <http://www.doingbusiness.org/data/exploretopics/registering-property>

Ներկայացվել է 15.12.2017թ.
Ընդունվել է տպագրության 26.12.2017թ.

⁶ Մարկոսյան Ա.Խ., Սահակյան Ա.Գ., Պետական գույքի կառավարում, ուսումնական ձեռնարկ/ «Տիգրան Մեծ» հրատ., 2015, Մաս 1, էջ 319